ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Պողոսյան Ս. Ս.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ. մտավոր զարգացման խնդիրներով դպրոցական, ուսումնաաշխատանքային գործունեություն, <<Տեխնոլոգիա>> առարկա, հետաքրքրություններ, պատկերացումներ, կրտսեր դպրոցական տարիք, աշխատունակություն:

Մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականների ուսումնաաշխատանքային գործունեությունը կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ, որոնք նպաստում են տվյալ գործունեության պլանավորմանը և արդյունավետության բարձրացմանը: Այդ գործոններից են, օրինակ աշխատանքի հանդեպ պահանջմունքների, առաջադրանքի կատարման գործընթացում կողմնորոշվելու ունակության, սեփական ուժերի վրա վստահ լինելու կարողությունների ձևավորումը և այլն [1]:

Հաշվի առնելով հիմնախնդրի արդիականությունը՝ մեր հետազոտության առջև դրել ենք հետևյալ հիմնական նպատակը՝ մշակել մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մանկավարժական համակարգ և դրա կիրառման մանկավարժական մոտեցումներ:

Առաջին հերթին մեզ հետաքրքրում էր նշված երեխաների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման և անցկացման գործընթացի համար անհրաժեշտ նպատակաուղղված աշխատանքների որոնումը: Դրանք իրենց մեջ մասնավորապես ընդգրկում են՝

1. <<Տեխնոլոգիա>> առարկայի գործնական նյութերի վերաբերյալ տեսական պատկերացումների և համապատասխան գիտելիքների ձևավորումը,
2. թղթով, ստվարաթղթով, փայլաթիթեղով աշխատելու կարողության ձևավորումը,
3. բնական նյութերով (ծառի ճյուղ, տերև, տարբեր բույսեր, ծաղիկներ, խոտեր և այլն) աշխատելու կարողության ձևավորումը,
4. մանածագործական նյութերով (տարբեր որակի թելեր, ուլունքներ), կավով և ծեփամածիկով աշխատելու կարողության ձևավորումը,
5. փայտանյութով, մետաղալարով աշխատելու կարողության ձևավորումը,
6. գծագրական գործիքների հետ

աշխատելու կարողության ձևավորումը,
7. սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման կարողության ձևավորումը,
8. ինքնասպասարկման կարողությունների ձևավորում,
9. անվտանգության կանոնների պահպանման կարողության ձևավորում,
10. երթևեկության և կենցաղային միջոցներից օգտվելու կարողությունների ձևավորումը,
11. սննդից ճիշտ օգտվելու կանոնների վերաբերյալ պատկերացումների ձևավորումը:

Այս խնդիրների լուծման նպատակով մեր կողմից մշակվել, համակարգվել և կիրառվել են մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականների հետ իրականացվող աշխատանքների կազմակերպման և անցկացման մոտեցումներ, միջոցներ, մեթոդներ: <<Տեխնոլոգիա>> առարկայի դասավադման ընթացքում դրանցից հիմնականներն են ՝

1. մանր մոտորիկայի զարգացումը,
2. ձեռքի փոխհամաձայնեցված շարժումների զարգացումը և կատարելագործումը
3. ձեռքի շարժումների կորդինացիայի, ճշգրտության և ճարպկության զարգացումն ու կատարելագործումը,
4. աչքի և ձեռքի շարժումների համագործակցության զարգացումը,
5. տեսողական ընկալման զարգացումը,
6. աշխատանքների կատարման ընթացքում ճիշտ կեցվածքի պահպանման կարողության ձևավորումը,
7. ուսումնաաշխատանքային գործունեության ընթացքում տեսողության պահպանումը և դրա խանգարումների կանխարգելումը,
8. աշխատանքի և հանգստի ռեժիմի ճիշտ կիրառում,
9. կատարվող աշխատանքի հանդեպ դպրոցականների հետաքրքրության ձևավորումը:

Վերոնշյալ աշխատանքները <<Տեխնոլոգիա>> առարկայի դասավանդման ընթացքում անհրաժեշտ է կազմակերպել սկսած առաջին դասարանից՝ տարեցտարի ըստ առարկայական ուսումնական ծրագրի ծավալը մեծացնելով ու հավասարապես բաշխելով տարրական դասարանների միջև [4,5]: Օրինակ, աշխատանքի ընթացքում ճիշտ կեցվածքի ձևավորումը (սեղանի մոտ աշխատանքի կատարման ժամանակ պահպանել ճիշտ դիրք՝ նստել ուղիղ, գլուխը թեթևակի իջեցնել առաջ, ձեռքերը հենել սեղանին, պահպանել աչքից և պատրաստվող առարկայի միջև հեռավորությունը (25-30 սմ) և այլն), տեսողության պահպանումը և դրա խանգարումների կանխարգելումը (լուսավորության պայմաններ՝ բնական լույսի կիրառում, սեղանի մոտ տեսողական աշխատանք կատարելիս ճիշտ լուսավորության ապահովում, բնական և արհեստական լույսի արդյունավետ հերթականություն և այլն), մանր մոտորիկայի զարգացումը (ավազի մանր հատիկների շոշափում, խճանկարի պատրաստում, խճաքարերի հետ տարբեր աշխատանքներ և այլն) նպատակային է սկսել հենց առաջին դասարանից [2]:

Երկրորդ և երրորդ դասարաններում պետք է առավելապես ուշադրություն դարձնել շարժողական կարողության զարգացմանը, հատկապես՝ ընդհանուր և ձեռքի նուրբ շարժումների: Իսկ ավելի բարձր դասարաններում պետք է կատարելագործել մտավոր զարգացման խնդիրներով դպրոցականի գործնական կարողությունները և ունակությունները. սուր, կտրող, ծակող գործիքների (ասեղ, մկրատ, սղոց, բիզ և այլն), տարբեր կտորների, թղթերի, բնական և արհեստական նյութերի և այլ պարագաների հետ աշխատելու կարողությունների ձևավորումը: Նմանատիպ աշխատանքների կազմակերպման և անցկացման ընթացքում անպայման պետք է պահպանել հանգստի ճիշտ ռեժիմը, քանի որ մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականին բնորոշ է շուտ հոգնելիությունը, կենտրոնանալու անկարողությունը, ցրվածությունը և վարքային այլ դրսևորումներ: Հանգստի ռեժիմը պահպանելու համար նպատակահարմար է ժամանակ առ ժամանակ անցկացնել ֆիզկուլտ դադարներ, աչքի և ձեռքերի մկանները հանգստացնող հատուկ վարժություններ: Օրինակ, շնչառությունը կարգավորող վարժություններ, կքանիստ, քայլք տեղում և այլն: Աչքի մկանները հանգստացնող վարժությունները կարելի է կիրառել և՛ աշխատանքից առաջ և՛ աշխատանքից հետո:

Մեր կողմից կազմակերպված հետազոտության արդյունքում պարզվել է, որ մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականների <<Տեխնոլոգիա>> առարկայի արդյունավետ դասավանդման ընթացքում անհրաժեշտ է նաև մշակել ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման օրինակելի համակարգ, որը մի ամբողջական համակարգ է և կազմված է միմյանց հետ փոխկապակցված բաժիններից:

Այդ համակարգը միավորում է մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մեր կողմից առաջարկվող մանկավարժական պայմանները: Առաջին հերթին պետք է հաշվի առնել՝

- մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականների հոգեֆիզիկական զարգացման մակարդակը,
- այդ երեխաների ուսումնաաշխատանքային գործունեության նախադրալների զարգացումը,
- ուսումնաաշխատանքային գործունեության վերաբերյալ տեսական գիտելիքների ձևավորումը,
- <<Տեխնոլոգիա>> առարկայի գործնական նյութի վերաբերյալ նախնական պատկերացումների ձևավորումը,
- մասնագիտական կողմնորոշման ուղղվածության աշխատանքները:

Մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման և անցկացման հիմնախնդիրն այսօր մանկավարժական կարևոր տեսանկյունից է դիտվում: Այդ հիմնավորմամբ <<Տեխնոլոգիա>> առարկայի դասավանդման ընթացքում մենք հաշվի ենք առել հետևյալ ընդհա-

նուր մանկավարժական սկզբունքները՝

- ուսուցման միջոցների և բովանդակության գործառութային ուղղվածությունը,
- հաջորդականության և մատչելիության սկզբունքը,
- երեխաների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման համալիր մոտեցումը և այլն:

<<Տեխնոլոգիա>> առարկայի դասավանդման ընթացքում երեխաների հետ աշխատանքի կառուցման շարքում հաշվի ենք առել նաև հատուկ սկզբունքներ, որոնք ևս առնչվում են մեր հիմնական աշխատանքին: Այդ սկզբունքների կիրառման ընթացքում հաշվի ենք առել մտավոր զարգացման խնդիր ունեցող կրտսեր դպրոցականների ընդհանուր զարգացման առանձնահատկությունները: Դրանք են՝

- նշված դպրոցականների խանգարման բնույթի և աստիճանի հաշվառումը,
- մանկավարժական մոտեցումների և բովանդակության ուղղվածությունը՝ ուսումնաաշխատանքային նախադրալների ձևավորումը,
- մանկավարժական աշխատանքների կազմակերպման ուղղվածությունը՝ ուսումնաաշխատանքային գործունեության տեսական գիտելիքների և գործնական կարողությունների զարգացումը,
- աշխատանքի ուղղվածությունը դեպի մասնագիտական կողմնորոշումը և այլն [3]: Հիմք ընդունելով վերոնշյալ սկզբունքներ՝ մենք ընտրել, մշակել և համակարգել ենք մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մանկավարժական միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները:

<<Տեխնոլոգիա>> առարկայի դասավանդման ընթացքում մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման համար առաջին հերթին անհրաժեշտ է հաշվի առնել նրանց հոգեֆիզիկական զարգացման մակարդակը, այսինքն՝ մտավոր զարգացման խանգարման բնույթը և աստիճանը, երկրորդային խանգարումների առկայությունը, զուգակցված և անձնային որակների խանգարումները:

Այդ երեխաների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մանկավարժական պայմանների օրինակելի համակարգում մենք նշել ենք այդ գործունեության նախադրյալների ձևավորման մասին: Այն ներառում է ընդհանուր և մանր մոտորիկայի զարգացումը, ըստ ուսումնական նյութի գործնական կարողությունների և հմտությունների, կատարվող աշխատանքի հանդեպ հետաքրքրությունների, դժվարությունները հաղթահարելու կարողությունների և ունակությունների ձևավորումն ու զարգացումը (նկար 1): Այս մոտեցումները հնարավորություն են տալիս մինչև ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպմանն անցնելը ձևավորել և զարգացնել մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականների տվյալ գործու-



Նկար 1. Ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպմանն անհրաժեշտ նախադրյալների ձևավորման գծապատկեր

նեության համար անհրաժեշտ նախադրյալները:

Հայտնի է, որ մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականներն ունեն շարժումների կորդինացիայի, ճշգրտության, ճարպկության, ինչպես նաև մատների նուրբ շարժումների խանգարումներ, որոնց հետևանքով ըստ ուսումնական նյութի պատրաստվող իրը կամ առարկան կարող է լինել ոչ կոկիկ և անլիարժեք: Բացի այդ մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականները, առաջադրանքի կատարման ժամանակ հանդիպած դժվարությունների պատճառով դրսևորում են աշխատունակության իջեցում, շուտ հոգնելիություն, որոնց հետևանքով աշխատանքն ավարտին չեն հասցնում և ցուցաբերում են հուզական տարբեր դրսևորումներ:

Առանձնապես կարևոր է աշխատանքի հանդեպ հետաքրքրությունների ձևավորումը, որը կարելի է իրականացնել լավագույն աշխատանքների ցուցադրումով, ձեռքի աշխատանքների վերաբերյալ տեսահոլովակների և նկարների դիտումով, աշակերտներին խրախուսելով և այլն: Իսկ դժվարությունների հաղթահարման համար առավել նպատակային է աշխատանքի վերջնական արդյունքի ցուցադրումն ու բացատրումը, տեսողական և մկանային լարվածության կանխարգելումը, հանգստի ռեժիմի պահպանումը և այլն: Այս հիմնավորմամբ էլ մեր կողմից առաջարկվող մանկավարժական մոտեցումները կնպաստեն նման խնդիրների հաղթահարմանը:

Հայտնի է, որ զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման համար կարևոր է այդ ուղղությամբ տեսական գիտելիքների ձեռքբերումը: Այսպես, մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականները պետք է ունենան պատրաստվող առարկայի գործնական նշանակության, աշխատանքի արդյունավետ կազմակերպման, անվտանգության կանոնների պահպանման, ինչպես նաև տարբեր աշխատանքներ կատարելու ընթացքում փոխօգնության կարողության ձևավորման վերաբերյալ տեսական գիտելիքներ: Սա նույնպես նպաստում է ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման հանդեպ սովորողների հուզական վերաբերմունքի դրսևորմանը, քանի որ աշխատանքի արդյունքն այս դեպքում համարվում է պահանջմունքի բավարարման առարկա:

Ուսումնաաշխատանքային գործունեության արդյունավետ կազմակերպման համար մենք առաջարկել և համակարգում ներառել ենք նաև մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականների <<Տեխնոլոգիա>> առարկայի գործնական նյութի վերաբերյալ նախնական պատկերացումների ձևավորման բաժինը, այսինքն՝ ձևավորել թղթով, ստվարաթղթով, բնական և արհեստական նյութերով, մանածագործական նյութերով աշխատելու կարողություն, ինչպես նաև այլ աշխատանքներ կատարելու ունակություններ: Սա կարևորվում է նրանով, որ մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականները սովորաբար ունենում են տարրական

պատկերացումներ շրջապատող առարկաների և երևույթների, ինչպես նաև դրանց հատկությունների վերաբերյալ:

Ներկայացված համակարգում առանձնահատուկ տեղ ենք հատկացրել այդ երեխաների մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպման բաժնին, որի բովանդակությունն ուղղված է նրանց ստեղծագործական ունակությունների ձևավորմանը, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին մասնակցելուն, ձեռք բերած կարողությունները կենցաղում կիրառելուն:

Ներկայացված օրինակելի համակարգի տեսական և գործնական մոտեցումները, միջոցները, մեթոդները և դրանց կիրառման մանկավարժական պայմանները ներառել ենք մանկավարժական միամյա փորձարարությունում, որի ընթացքում ձեռք բերած արդյունքները փաստում են այդ համակարգի արդյունավետությունը:

Ակնհայտ է դառնում, որ մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման համար ներկայացված աշխատանքի բովանդակությունը և մանկավարժական պայմանները կնպաստեն այդ երեխաների՝ ինչպես տեսական, այնպես էլ գործնական ունակությունների զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պողոսյան Ս. Ս., Մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գարծունեության կազմակերպման մանկավարժական պայմանները: Ատենախոսության սեղմագիր, Երևան, 2014, 22 էջ:

2. Азарян Р. Н. Характеристика развития общей и мелкой моторики дошкольников с отклонениями в умственном и психическом развитии // XXXVII Республ. Научн.конференц. Ереван, 2001, С. 54–55.

3. Балашова И.А. Профориентационная деятельность образовательного учреждения// Справочник руководителя образовательного учреждения.2008. №2. С. 48–64.

4. Васенков Г. В. Технология трудового обучения детей с недостатками интеллекта// Дефектология. 2004.- №3. С.60-66.

5. Ефанова З.А. Трудовое обучение.- Волгоград: Корифей, 2010.-99 с.

РЕЗЮМЕ

ПЕДАГОГИЧЕСКАЯ СИСТЕМА ОРГАНИЗАЦИИ УЧЕБНО-ТРУДОВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ УМСТВЕННО ОТСТАЛЫХ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ И ПОДХОДЫ К ЕЕ ПРИМЕНЕНИЮ

Погосян С. С.

преподаватель кафедры специальной педагогики и психологии Армянского государственого педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

В статье представлена примерная система организации учебно-трудовой деятельности детей с умственной отсталостью развития, определены средства, методы и педагогические подходы для организации и проведения разнообразной работы на уроках технологии с данным контингентом детей

SUMMARY

THE ORGANIZATION OF EDUCATIONAL WORKING SYSTEM OF MENTALLY IMPAIRMENTS YOUNGER SCHOOL STUDENTS AND PEDAGOGICAL APPROACHES TO ITS APPLICATION

Pogosyan S. S.

Lecturer at the Chair of Special Pedagogy and Psychology Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences.

The article presents the organizational system of educational working process for mentally retarded primary school children, also it reveals the approaches, ways and methods of organizing and conducting the work process with those children.